ՎԴ/11609/05/25

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԳՈՐԾԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2 փետրվարի 2026 թվական քաղաք Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահ Հովսեփ Բեդևյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահ Գոռ Հակոբյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, նիստում ուսումնասիրելով թիվ ՎԴ/11609/05/25 գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ՀՀ Վճռաբեկ դատարան ուղարկելու վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2026 թվականի հունվարի 13-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. Ա. Մ.-ը 2025 թվականի հուլիսի 18-ին հայցադիմում է ներկայացրել (փոստին է հանձնել) ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ պատասխանողին երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի անցնելու կապակցությամբ զինվորական ծառայությունից արձակելիս հայցվորին ՀՀ Կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 1119-Ն որոշմամբ սահմանված կարգով և չափերով դրամական օգնությունը հաշվարկելուն ու տրամադրելուն պարտավորեցնելու, պատասխանողին զինվորական ծառայությունը շարունակելու համար հայցվորի հետ կնքված 9 նոր

պայմանագրերի համար հայցվորի ունեցած զինվորական ծառայության ստաժին համապատասխան դրամական օգնությունը հաշվարկելուն և տրամադրելուն պարտավորեցնելու պահանջների մասին:

2. ՀՀ վարչական դատարանի՝ 2025 թվականի դեկտեմբերի 16-ի որոշմամբ գործը վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2026 թվականի հունվարի 13-ի որոշմամբ գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարան:

4. Գործը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2026 թվականի հունվարի 19-ին:

<u>Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Հղում կատարելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածին, 3-րդ հոդվածի 1-ին մասին, 10-րդ հոդվածին (նախկինում գործող խմբագրությամբ), 81-րդ հոդվածին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածին, «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2024 թվականի մայիսի 2-ի թիվ ՀՕ-220-Ն օրենքի 1-ին հոդվածին, 37-րդ հոդվածի 2-րդ մասին, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածին, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածին՝ ՀՀ վարչական դատարանը 2025 թվականի դեկտեմբերի 16-ի որոշմամբ գործը վերահասցեագրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(…) Դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործով ներկայացված հայցադիմումով հայցվոր կողմը խնդրել է պարտավորեցնել պատասխանող վարչական մարմնին ՀՀ Կառավարության 25.09.2014 թվականի թիվ 1119-Ն որոշմամբ սահմանված կարգով և չափերով դրամական օգնություն հաշվարկել և տրամադրել: Դատարանը փաստում է, որ ՀՀ կառավարության 25.09.2014 թվականի թիվ 1119-Ն որոշմամբ սահմանված դրամական օգնության չափերը և տրամադրման կարգը վերաբերում են, ի թիվս այլնի, զինվորական ծառայության, հետևաբար հանրային ծառայության, հետ*

կապված դրամական օգնությանը, ինչից հետևում է, որ սույն վարչական գործով կողմերի միջև ծագած վեճը վերաբերում է հանրային ծառայության հետ կապված դրամական օգնության տրամադրմանը:

Ամբողջ վերոգրյալից հետևում է, որ հայցադիմումը ներկայացնելու օրվա դրությամբ սույն գործն այլևս ընդդատյա չի եղել ՀՀ վարչական դատարանին, քանի որ սույն հայցադիմումը Դատարան է մուտքագրվել 21.07.2025 թվականին, մինչդեռ, վերոնշյալ փոփոխությունն ուժի մեջ է մտել 01.01.2025 թվականին, իսկ վեճն իր բնույթով վերաբերում է հանրային ծառայության իրականացմանը՝ դրա ընթացքում հայցվորին ենթադրյալ վճարման ենթակա գումարներին, որպիսի վեճն իր բնույթով աշխատանքային է (…)»[1]:

6. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետին, 20-րդ հոդվածի 1-ին մասին, 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 210-րդ հոդվածին (2024 թվականին փոփոխված խմբագրությամբ) ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասին, 10-րդ հոդվածի 1-ին ու 2-րդ մասերին, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածին, 63-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 13-րդ հոդվածին, ՀՀ Կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 1119-Ն որոշման 1-ին հոդվածի 1-ին մասին, նույն որոշման հավելված N1-ի 1-ին կետի 1-ին ենթակետին, 2-րդ, 3-րդ, 5-րդ ու 6-րդ կետերին, ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի փետրվարի 3-ի թիվ ՍԴՈ-787 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշմանը, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 27-ի թիվ ԵԱՔԴ/0433/02/11, 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ԵՄԴ/1029/02/14 և 2022 թվականի մայիսի 13-ի թիվ ԵԴ/38635/02/19 գործերով արտահայտած իրավական դիրքորոշումներին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2026 թվականի հունվարի 13-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին ու այդ առնչությամբ դիմել է Վճռաբեկ դատարան՝

[1] Տե՛ս դատական գործը, թերթեր 48-52:

նշելով հետևյալը. *«(...) հայցվորի պահանջով վիճարկվող դրամական օգնության տրամադրումը չի ծագում քաղաքացիական-իրավական (աշխատանքային կամ այլ մասնավոր) պայմանագրային հարաբերությունից, այլ հանդիսանում է զինվորական երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու և զինվորական ծառայությունից արձակման հետ կապված հատուկ հանրային ծառայողական կարգավորումների բաղադրիչ մաս: Համապատասխանաբար՝ դրամական օգնության հաշվարկման և վճարման հարցերը կարգավորվում են ոչ թե կողմերի կամավոր կամ պայմանագրային համաձայնությամբ, այլ օրենքով և ենթաօրենսդրական ակտով նախատեսված պարտադիր, միակողմանի կիրառվող նորմերով, որոնց իրականացման հացեատերերից մեկն է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը՝ որպես հանրային իշխանություն իրականացնող վարչական մարմին: Տվյալ հարաբերություններում Պաշտպանության նախարարությունը հանդես է գալիս ոչ թե որպես մասնավոր իրավունքի ենթակա իրավահավասար սուբյեկտ, այլ որպես հանրային իշխանական լիազորություններով օժտված մարմին՝ իր լիազորությունները գործադրելով հանրային շահի շրջանակում՝ զինվորական ծառայության ոլորտում պետական քաղաքականության և զինծառայողների սոցիալական երաշխիքների ապահովման նպատակով:*

Նման պայմաններում Դատարանի գնահատմամբ վեճը ծագում է հանրային իրավահարաբերությունից, քանի որ հայցվորի՝ դրամական օգնություն ստանալու իրավունքը և այդ դրամական օգնության հաշվարկման ու տրամադրման վերաբերյալ վարչական մարմնի կողմից որոշում կայացնելու պարտականությունը պայմանավորված են զինծառայողի (նախկին զինծառայողի) հատուկ իրավական կարգավիճակով և այդ կարգավիճակին օրենսդրորեն կապվող սոցիալական երաշխիքներով: Դրամական օգնություն ստանալու վերաբերյալ հայցվորի դիմումը, ինչպես նաև այդ դիմումը մերժող գրությունը, իրենց բնույթով վարչական ընթացակարգի փուլեր են, որոնց շրջանակում հանրային իրավասու մարմինը որոշում է կայացնում՝ առկա են, թե՞ ոչ օրենքով և կառավարության որոշմամբ սահմանված նախադրյալները դրամական օգնություն տրամադրելու համար: Այս գործընթացում հայցվորի իրավական վիճակը պայմանավորված է հանրային իշխանության կրողի՝ միակողմ որոշում կայացնելու հնարավորությամբ, այդ թվում՝

դիմումը բավարարելու կամ մերժելու ձևով, ինչի հետևանքով վեճի առարկան ոչ թե քաղաքացիական կամ աշխատանքային պայմանագրային պարտավորության կատարումն է, այլ վարչական մարմնի կողմից օրենքով վերապահված լիազորությունների օրինական և պատշաճ իրականացումը՝ սոցիալական երաշխիք տրամադրելու կամ չտրամադրելու հարցում:

(...)

Սույն գործով ներկայացված հայցով չի վիճարկվում հայցվորի հանրային (զինվորական) ծառայության անցնելու, այն իրականացնելու կամ ծառայությունից ազատելու իրավաչափությունը, ինչպես նաև այդ ակտերի/գործողությունների փոփոխումը կամ վերացումը, այլ պահանջվում է զինվորական ծառայությունից արձակման հանգամանքից բխող հատուկ սոցիալական երաշխիքի՝ օրենքով սահմանված դրամական օգնության հաշվարկման և վճարման պարտավորության կատարում: Այսինքն՝ վեճի առարկան չի ընդգրկվում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածով առանձնացված աշխատանքային վեճերի, այդ թվում՝ «հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատվելու հետ կապված» վեճերի տիրույթում, քանի որ տվյալ դեպքում դատարանը պետք է գնահատի ոչ թե ծառայության անցնելու, իրականացնելու, դադարեցնելու իրավաչափությունը, այլ վարչական մարմնի կողմից սոցիալական երաշխիք սահմանող հանրային-իրավական նորմերի իրավաչափ կիրառումը: Այս հանգամանքը, իր հերթին, բացառում է տվյալ վեճը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի իմաստով հատուկ հայցային վարույթի կարգով քննվող աշխատանքային վեճերի շարքին դասելու հնարավորությունը և չի կարող այն դուրս բերել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածով սահմանված՝ հանրային իրավահարաբերություններից ծագող գործերի շրջանակից:

Արդյունքում՝ ելնելով նրանից, որ վեճի հիմքում ընկած իրավահարաբերությունները բնույթով հանրային-իրավական են և չեն դասվում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածով նախատեսված հատուկ աշխատանքային վեճերի կազմի մեջ, Դատարանն եզրակացնում է, որ

գործն ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի քննությանը (…)»[2]:

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը</u>.

7. Սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հիմնավոր է արդյո՞ք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ/11609/05/25 գործն ըստ Ա. Մ.-ի հայցի ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ պատասխանողին երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի անցնելու կապակցությամբ զինվորական ծառայությունից արձակելիս հայցվորին ՀՀ Կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 1119-Ն որոշմամբ սահմանված կարգով և չափերով դրամական օգնությունը հաշվարկելուն ու տրամադրելուն պարտավորեցնելու, պատասխանողին զինվորական ծառայությունը շարունակելու համար հայցվորի հետ կնքված 9 նոր պայմանագրերի համար հայցվորի ունեցած զինվորական ծառայության ստաժին համապատասխան դրամական օգնությունը հաշվարկելուն և տրամադրելուն պարտավորեցնելու պահանջների մասին, ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:*

8. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Մասնագիտացված դատարաններն են՝*

1) վարչական դատարանը. (…)»:

Նույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:*

Նույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի*

---

[2] Տե՛ս դատական գործը, թերթեր 59-62:

դատարանում, բացառությամբ «Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի»:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (...) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝ *«(...) 2. Դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում վարչական դատարանից վերահասցեագրված հայցադիմումը վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը:*

(...)

6. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերում Վճռաբեկ դատարանի նախագահը և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահները գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում որոշում են գործի ենթակայությունը:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունելու համար Վճռաբեկ դատարանի նախագահը հրավիրում է նիստ՝ իր և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահների մասնակցությամբ, որն իրավազոր է, եթե դրան մասնակցում են նիստին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք:

8. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունվում է նիստին ներկա անձանց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում: Որոշմանը կողմ քվեարկած դատավորների կազմից և նրանց կողմից որոշված դատավորը կազմում է որոշման նախագիծը:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:

10. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով գործի ենթակայությունը սահմանելու մասին որոշում կայացվելու դեպքում չի կարող վերաքննիչ բողոք բերվել սույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի հիմքով այն

պատճառաբանությամբ, որ գործը ենթակա չի եղել քննության քաղաքացիական դատավարության կարգով»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *«Առաջին ատյանի դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով»:*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի՝ մինչև 2025 թվականի հունվարի 1-ը գործող խմբագրությամբ 1-ին կետի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, ներառյալ՝ հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված վեճերը»:*

2024 թվականի մայիսի 2-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-220-Ն ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ *«2013 թվականի դեկտեմբերի 5-ի Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի (...) 10-րդ հոդվածում 1-ին մասի 1-ին կետն ուժը կորցրած ճանաչել»:*

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«1. Երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի անցնելու կամ զինվորական ծառայության մեջ գտնվելու սահմանային տարիքը կամ պայմանագրի ժամկետը լրանալու կամ առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելու կամ հաստիքների կրճատման, այդ թվում ստորաբաժանման լուծարման կապակցությամբ զինվորական ծառայությունից արձակվելիս զինծառայողներին Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և չափերով տրվում է դրամական օգնություն՝*

1) 3 տարուց մինչև 10 տարի զինվորական ծառայության համար.

2) 10 տարուց մինչև 15 տարի զինվորական ծառայության համար.

3) 15 տարուց մինչև 20 տարի զինվորական ծառայության համար.

4) 20 տարուց մինչև 25 տարի զինվորական ծառայության համար.

5) 25 և ավելի տարի զինվորական ծառայության համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Մինչև երեք տարվա զինվորական ծառայության ստաժ ունեցող և առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելու կապակցությամբ պայմանագրային զինծառայողներին, ինչպես նաև զորակոչի միջոցով պարտադիր զինվորական ծառայություն անցնող սպայական կազմին օրենքով սահմանված ժամկետը լրանալու կապակցությամբ կամ առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայությունից արձակելիս հաշվարկվում է դրամական օգնություն՝ վերջին զբաղեցրած զինվորական ծառայության պաշտոնի պաշտոնային դրույքաչափի չափով»:*

Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ *«Պայմանագրի ժամկետը լրացող և օրենքով սահմանված կարգով զինվորական ծառայությունը շարունակելու համար նոր պայմանագիր կնքելու ցանկություն հայտնած շարքային կամ կրտսեր ենթասպայական կազմերի զինծառայողին իր ցանկությամբ տրվում է դրամական օգնություն՝ սույն հոդվածի 1-ին մասի համաձայն ունեցած զինվորական ծառայության ստաժին համապատասխան սահմանված չափով: Ընդ որում, սույն մասով սահմանված դրամական օգնությունը համապատասխան ստաժի շրջանակներում տրվում է մեկ անգամ, ինչպես նաև դրա հաշվարկման համար կիրառվում են սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված կանոնները»:*

Նույն հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ *«Սույն հոդվածով սահմանված դրամական օգնությունների վճարման կարգը և պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»:*

Զինծառայողներին տրվող դրամական օգնությունների վճարման կարգը և պայմանները սահմանվել են ՀՀ Կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 1119-Ն որոշմամբ:

9. Նախորդ կետում վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին է վերապահել այն բոլոր գործերը, որոնց քննությունը վերապահված չէ մասնագիտացված դատարաններին, այդ թվում՝ վարչական դատարանին: Միևնույն ժամանակ, օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որում ներառված են հանրային իրավահարաբերություններից բխող

վեճերի վերաբերյալ գործերը: Փաստորեն, որևէ դատական գործի՝ վարչական կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում քննության ենթակա լինելու հարցը որոշվում է՝ հիմք ընդունելով այն իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային), որից բխող վեճը հանձնվում է դատարանի քննությանը:

Հարկ է նշել, որ մինչև 2025 թվականի հունվարի 1-ը՝ գործող իրավակարգավորումների պայմաններում, ՀՀ վարչական դատարանի ենթակայությանը վերապահված էին նաև հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված վեճերը: Մինչդեռ, 2025 թվականի հունվարի 1-ից օրենսդիրը նշված գործերի քննությունը վերապահել է առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների քննությանը՝ ՀՀ վարչական դատարանի քննությանը թողնելով միայն մինչև 2025 թվականի հունվարի 1-ը նշված վեճերով ներկայացված հայցադիմումները, որոնք արդեն իսկ վարույթ են ընդունվել վարչական դատարանի կողմից:

Այսինքն՝ 2025 թվականի հունվարի 1-ից հետո ՀՀ վարչական դատարանն իրավասու է քննելու հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված միայն այն վեճերը, որոնց վերաբերյալ ներկայացված հայցադիմումները ՀՀ վարչական դատարանը վարույթ է ընդունել մինչև 2025 թվականի հունվարի 1-ը:

10. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- Ա. Մ.-ը 2025 թվականի հուլիսի 18-ին հայցադիմում է ներկայացրել (փոստին է հանձնել) ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ պատասխանողին երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի անցնելու կապակցությամբ զինվորական ծառայությունից արձակելիս հայցվորին ՀՀ Կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 1119-Ն որոշմամբ սահմանված կարգով և չափերով դրամական օգնությունը հաշվարկելուն ու տրամադրելուն պարտավորեցնելու, պատասխանողին զինվորական ծառայությունը շարունակելու համար հայցվորի հետ կնքված 9 նոր պայմանագրերի համար հայցվորի ունեցած զինվորական ծառայության ստաժին

համապատասխան դրամական օգնությունը հաշվարկելուն և տրամադրելուն պարտավորեցնելու պահանջների մասին[3],

- հայցադիմումը ՀՀ վարչական դատարանի՝ 2025 թվականի դեկտեմբերի 16-ի որոշմամբ վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ այն պատճառաբանությամբ, որ հայցադիմումով հայցվոր կողմը խնդրել է պարտավորեցնել պատասխանող վարչական մարմնին ՀՀ Կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 1119-Ն որոշմամբ սահմանված կարգով և չափերով դրամական օգնություն հաշվարկել ու տրամադրել, իսկ ՀՀ Կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 1119-Ն որոշմամբ սահմանված դրամական օգնության չափերը և տրամադրման կարգը վերաբերում են, ի թիվս այլնի, զինվորական ծառայության, հետևաբար հանրային ծառայության հետ կապված դրամական օգնությանը, ինչից հետևում է, որ սույն վարչական գործով կողմերի միջև ծագած վեճը վերաբերում է հանրային ծառայության հետ կապված դրամական օգնության տրամադրմանը[4],

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2026 թվականի հունվարի 13-ի որոշմամբ գտել է, որ հայցվորի պահանջով վիճարկվող դրամական օգնության տրամադրումը չի ծագում քաղաքացիական-իրավական (աշխատանքային կամ այլ մասնավոր) պայմանագրային հարաբերությունից, այլ հանդիսանում է զինվորական երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու և զինվորական ծառայությունից արձակման հետ կապված հատուկ հանրային ծառայողական կարգավորումների բաղադրիչ մաս: Դրամական օգնության հաշվարկման և վճարման հարցերը կարգավորվում են ոչ թե կողմերի կամավոր կամ պայմանագրային համաձայնությամբ, այլ օրենքով ու ենթաօրենսդրական ակտով նախատեսված պարտադիր, միակողմանի կիրառվող նորմերով, որոնց իրականացման հասցեատերերից մեկն է ՀՀ պաշտպանության նախարարությունը՝ որպես հանրային իշխանություն իրականացնող վարչական մարմին: Հայցվորի՝ դրամական օգնություն ստանալու իրավունքը և այդ դրամական օգնության հաշվարկման ու տրամադրման վերաբերյալ վարչական մարմնի կողմից որոշում կայացնելու պարտականությունը պայմանավորված են զինծառայողի

[3] Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:
[4] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

(նախկին զինծառայողի) հատուկ իրավական կարգավիճակով և այդ կարգավիճակին օրենսդրորեն կապվող սոցիալական երաշխիքներով: Դրամական օգնություն ստանալու վերաբերյալ հայցվորի դիմումը, ինչպես նաև այդ դիմումը մերժող գրությունը, իրենց բնույթով վարչական ընթացակարգի փուլեր են, որոնց շրջանակում հանրային իրավասու մարմինը որոշում է կայացնում՝ առկա են, թե՝ ոչ օրենքով և ՀՀ Կառավարության որոշմամբ սահմանված նախադրյալները՝ դրամական օգնություն տրամադրելու համար: Այս գործընթացում հայցվորի իրավական վիճակը պայմանավորված է հանրային իշխանության կրողի՝ միակողմ որոշում կայացնելու հնարավորությամբ, այդ թվում՝ դիմումը բավարարելու կամ մերժելու ձևով, ինչի հետևանքով վեճի առարկան ոչ թե քաղաքացիական կամ աշխատանքային պայմանագրային պարտավորության կատարումն է, այլ վարչական մարմնի կողմից օրենքով վերապահված լիազորությունների օրինական և պատշաճ իրականացումը՝ սոցիալական երաշխիք տրամադրելու կամ չտրամադրելու հարցում: Ուստի, հայցվորի պահանջը չի ներառվում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24-րդ գլխով կարգավորվող «Առանձին աշխատանքային վեճերով վարույթը» վերտառությամբ աշխատանքային վեճերի քննության ենթակա գործերի շարքում[5]:

11. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 8-9-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է նշել, որ հայցադիմումի առարկան կազմող հիմնական պահանջները վերաբերում են ՀՀ պաշտպանության նախարարությանը հայցվորին երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի անցնելու կապակցությամբ զինվորական ծառայությունից արձակելիս հայցվորին ՀՀ Կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 1119-Ն որոշմամբ սահմանված կարգով ու չափերով զինծառայողներին տրվող դրամական օգնությունը վճարելուն պարտավորեցնելուն, ինչպես նաև պատասխանողին զինվորական ծառայությունը շարունակելու համար հայցվորի հետ կնքված 9 նոր պայմանագրերի համար հայցվորի ունեցած զինվորական ծառայության ստաժին համապատասխան դրամական օգնությունը հաշվարկելուն և

[5] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

տրամադրելուն պարտավորեցնելուն, որպիսի պահանջները հայցվորը հիմնավորում է այն հանգամանքով, որ երկարամյա զինվորական կենսաթոշակի անցնելու կապակցությամբ զինվորական ծառայությունից արձակվելիս հայցվորին ՀՀ Կառավարության սահմանված կարգով ու չափերով չի տրամադրվել դրամական օգնություն, ինչպես նաև՝ զինվորական ծառայության ընթացքում հայցվորի պայմանագիրը լրացել է 9 անգամ և 9 անգամ հայցվորը ցանկություն է հայտնել զինվորական ծառայությունը շարունակելու համար նոր պայմանագիր կնքելու, և արդյունքում կնքվել են պայմանագրեր, սակայն, դրամական օգնությունը չի հաշվարկվել ու տրամադրվել հայցվորին, մինչդեռ նշվածը հիմք է «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին, 2-րդ ու 7-րդ մասերով սահմանված դրամական օգնությունը ՀՀ Կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 1119-Ն որոշմամբ սահմանված կարգով վճարելու համար: Սույն պարագայում հարկ է նշել, որ ՀՀ Կառավարության նշված որոշումը, ի թիվս այլնի, ընդունվել է ի կատարումն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի, որի բովանդակությունից ակնհայտ է, որ զինծառայողներին տրվող դրամական օգնությունների շահառու հանդիսանալու համար անհրաժեշտ պայման է հանդիսանում ՀՀ պաշտպանության նախարարության հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվելը, այն է՝ զինվորական ծառայություն (հանրային ծառայություն) իրականացնելը: Մասնավորապես՝ տվյալ դեպքում նշված դրամական օգնությունները տրամադրվում են աշխատանքային հարաբերություններից՝ զինվորական ծառայությունից արձակվելիս, ինչպես նաև պայմանագրի ժամկետը լրացող և օրենքով սահմանված կարգով զինվորական ծառայությունը շարունակելու համար նոր պայմանագիր կնքելու ցանկություն հայտնած զինծառայողին՝ որպես աշխատանքային հարաբերությունները շարունակելու ցանկություն հայտնած անձի: Նշվածից հետևում է, որ սույն գործով կողմերի միջև ծագած վեճն ուղղակիորեն ներառված է աշխատանքային վեճերի շարքում, քանզի զինծառայողներին տրվող դրամական օգնությունների շահառու չի կարող հանդիսանալ այլ անձ, քան զինվորական ծառայություն իրականացնող (իրականացրած) անձն է, հետևաբար վեճը պետք է քննության առնվի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի

կողմից՝ որպես հանրային ծառայության անցնելու, այն իրականացնելու և ծառայությունից ազատելու հետ կապված՝ գործատուի վճարային պարտականություններին առնչվող վեճ:

12. Վերոգրյալից հետևում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ/11609/05/25 գործն ըստ Ա. Մ.-ի հայցի ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ պատասխանողին երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի անցնելու կապակցությամբ զինվորական ծառայությունից արձակելիս հայցվորին ՀՀ Կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 1119-Ն որոշմամբ սահմանված կարգով և չափերով դրամական օգնությունը հաշվարկելուն ու տրամադրելուն պարտավորեցնելու, պատասխանողին զինվորական ծառայությունը շարունակելու համար հայցվորի հետ կնքված 9 նոր պայմանագրերի համար հայցվորի ունեցած զինվորական ծառայության ստաժին համապատասխան դրամական օգնությունը հաշվարկելուն և տրամադրելուն պարտավորեցնելու պահանջների մասին, ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին, հիմնավոր չէ:

Ուստի, Ա. Մ.-ի հայցադիմումի հիման վրա հարուցված թիվ ՎԴ/11609/05/25 գործը ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

թիվ ՎԴ/11609/05/25 գործն ըստ Ա. Մ.-ի հայցի ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ պատասխանողին երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի անցնելու կապակցությամբ զինվորական ծառայությունից արձակելիս հայցվորին ՀՀ Կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 1119-Ն որոշմամբ սահմանված կարգով և չափերով դրամական օգնությունը հաշվարկելուն ու տրամադրելուն պարտավորեցնելու, պատասխանողին զինվորական ծառայությունը շարունակելու համար հայցվորի հետ կնքված 9 նոր պայմանագրերի համար հայցվորի ունեցած զինվորական ծառայության ստաժին

համապատասխան դրամական օգնությունը հաշվարկելուն և տրամադրելուն պարտավորեցնելու պահանջների մասին, ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ
ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ
ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ
ԴԱՏԱՐԱՆԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՀՈՎՍԵՓ ԲԵԴԵՎՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ
ԴԱՏԱՐԱՆԻ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ
ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ